նու երկու հարիւր քսան դուռուշ հռօմէացուց դրամ, որում պատասխանէ մերոյ հայոց երկու հարիւր վաթսուն և չորս երծաթ դրամ, և դատախազն այս գանգատողիս ուխտեաց զի հատուցանել 'ի վեր ասացեալ դրամն ժամանակաւ երկու ամաւ հանդերձ վաշխիւ 'ի ամենայն մի հարիւրի 'ի մի տարին 6 դուռուշովն, վասն հաստատելոյ խօսքն գանգատողիս ներփակեցեալ 'ի այսմ ընծայեցի առ 'ի ատենն պատուելի յապարանիս Օրինակն վաշխապարտուց դատախազին նշանաւորեալ Ա. և յետ անցելոյ լրումն ժամանակին, ուխտի մերոյ գանգատողս բազմիցս անգամ սիրով և բարեկամութեամբ ելի 'ի խնդիր դատախազէ դրամիս և վաշխին մինչև ցայսօր ոչ գտի հատուցում, վասն այս պատճառի հայցեմ զի ելցէ պատուելի յապարանէն կոչումն դատախազին և իսկոյն պարտաւորել նմայ տալ երաշխաւոր վասն անձին իւրոյ մտանել 'ի դատաստան, և ակն ունեմ 'ի արդարութենէ դատողութեան ձերոյ զի հրաման տացէք դատախազին այս գանգատողիս, զի անթերի հատուցցէ դրամն այս գանգատողիս վաշխիւն հանդերձ ծախիւն զոր ելանէ դատաստանիս, փոխանակ այսքան բարութեան հատուցանէ Տէր վարձս ձեր 'ի հանդերձելումն։

Գրուեցաւ 'ի դրունս մայրաքաղաքին Երեւանու։